

ИСТОРИЯ

Պետրոս Տեփոյանի տեսակետները հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ

Մարգարյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0009-0005-6171-9021>

sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477); EDN: GVEVBK;

DOI: 10.58587/18292437-2024.2-33

Հանգուցաբառեր` «Թավշյա» հեղափոխություն, քաղաքականացված կյանք, քաղաքական կուսակցություն, իրատեսական հայացքներ, Հայկական հարց, բնույթով ռոմանտիկ, մարտավարություն, ռազմավարություն

Взгляды Петроса Тепояна об армянской национально-освободительной борьбе

Տարգյան Սուրեն Թ.

ժ. ս. ռ., պրոֆեսոր, վարչական գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

Аннотация. Беспрецедентно политизированная жизнь Республики Армения получила новый импульс после «Бархатной» революции. На место происшествия пришло большое количество организаций, которые направляли и сдерживали волнения в обществе. Активизировались и традиционные партии с уникальной политической траекторией в армянской жизни, освещение зафиксированных успехов и упущенных ошибок более чем важно и актуально с точки зрения понимания сегодняшних процессов и не повторения предыдущих ошибок. Обратимся к видному интеллектуалу П. Тепояну, который высказывал вполне реалистические взгляды. По мнению хорошо знакомого с западноармянской действительностью П. Тепояна, по сравнению со всеми народами Османской империи наиболее развитые армяне во второй половине XIX века стали демонстрировать беспрецедентный рост интеллектуальных способностей, что подготовило национально-освободительную борьбу. Она потерпела поражение не только благодаря антиармянской жестокой политики Турции, но и в результате конфликта экономических интересов великих держав. Казалось, что после берлинских переговоров решение армянского вопроса не следует рассматривать в зависимости от большой стратегии, но этого не произошло. Одной из причин поражения стало также то, что деятельность партии Гнчакян приобрело романтический характер, была выбрана неправильная тактика и стратегия, в результате чего не был достигнут ожидаемый результат.

Ключевые слова: «Бархатная» революция, политизированная жизнь, политическая партия, реалистичные взгляды, армянский вопрос, романтик по натуре, тактика, стратегия

Petros Tepoyan's views on Armenian national liberation about the struggle

Տարգյան Սուրեն Թ.

Ժ. ս. ռ., պրոֆեսոր, վարչական գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

Abstract. The unprecedentedly politicized life of the Republic of Armenia received a new impetus after the Velvet Revolution. A large number of organizations came to the scene to guide and contain the unrest in the community. Traditional parties with a unique political trajectory in Armenian life have also become more active; highlighting recorded successes and missed mistakes is more than important and relevant from the point of view of understanding today's processes and not repeating previous mistakes. Let us turn to the prominent intellectual P. Tepoyan, who expressed quite realistic views.

According to P. Tepoyan, who is well acquainted with Western Armenian reality, in comparison with all the peoples of the Ottoman Empire, the most developed Armenians in the second half of the 19th century began to demonstrate an unprecedented growth in intellectual abilities, which prepared the way for the national liberation struggle. It was defeated not only thanks to Turkey's cruel anti-Armenian policy, but also as a result of the conflict of economic interests of the great powers. It seemed that after the Berlin negotiations the solution to the Armenian question should not be considered depending on grand strategy, but this did not happen. One of the reasons for the defeat was also that the activities of the Hunchakian party acquired a romantic character, the wrong tactics and strategy were chosen, as a result of which the expected result was not achieved.

Keywords: "Velvet" revolution, politicized life, political party, realistic views, Armenian question, romantic in nature, tactics, strategy

Հայաստանի Հանրապետության վերաանկախացմանը նախորդող և հատկապես դրան հաջորդած տարիներին կյանքն աննախադեպ քաղաքականացավ: Իսկ «Թավշյա» հեղափոխությունից հետո այդ գործընթացը նոր թափ հավաքեց:



Հասարակության մեջ ծավալված քաղաքական այդ խմորումներն ուղղորդելու և ղեկավարելու համար ասպարեզ իջան մեծ թվով նոր կազմակերպություններ և կուսակցություններ: Աշխուժացան նաև ազգային-ազատագրական պայքարի բովում թրծված և հայ կյանքում քաղաքական ուրույն հետագիծ ունեցող ավանդական կուսակցությունները: Դրանց ունեցած ներդրումների, հաջողությունների ու բաց թողած սխալների ուսումնասիրությունն ու լուսաբանումը ավելի քան կարևոր է դառնում այսօրյա գործընթացները հասկանալու և նախկին սխալները չկրկնելու առումով: Դրանցից մեկը՝ 1887 թ. Հնչակյան կուսակցությունն է, որը հիմնադրվել է 1887 թ. օգոստոսին Եվեյցարիայի Ժնև քաղաքում, արևելահայ ուսանողներ՝ Ավետիս Նազարբեկյանի, Մարո Վարդանյանի, Ռուբեն Խանազատյանի, Գարրիել Կաֆյանի, Բրիտտափոր Օհանյանի, Գևորգ Ղարաջյանի, Մանուել Մանուելյանի կողմից [1; 3; 7; 8; 9]: Մեծ վերելքների ու ցավալի անկումների հետագիծ ունեցող Հնչակյան կուսակցության պատմության կարևոր ժամանակահատվածի և հայոց ազգային-ազատագրական պայքարի սկզբի ու պարտության, այսինքն՝ 1885-1908 թթ. փուլի վերաբերյալ հայ նշանավոր մտավորական Պետրոս Տեփոյանի¹ տեսակետների մասին է սույն հոդվածը:

¹ Արևմտահայ նշանավոր հասարակական քաղաքական գործիչ, մամուլի անխոնջ մշակ և երախտավոր **Պետրոս Տեփոյանը** (Խարբերդ 1884–1956 Կահիրե) ավարտելով տեղի Եփրատ քոլեջը նշանակվում է Մալաթիայի Ազգային վարժարանի տեսուչ: Բժիշկ դառնալու մտադրությամբ 1908 թ. մեկնում է Բոստոն, սակայն նյութական միջոցների բացակայության պատճառով կիսատ է թողնում ուսումը: Այստեղ անդամակցում է Վերակազմյալ հնչակյան (Ազատական) կուսակցությանը: Չբաղվում է առևտրով և դառնում կոշիկի գործարանի սեփականատեր: 1915 թ. որպես կամավոր մեկնում է Թիֆլիս, որտեղ ամուսնանում է Մաթենիկ Մուրադյանի հետ և ունենում է դուստր Անահիտին: Ծանր վիրավորվում է ռազմաճակատում և դառնում է Անդրանիկի խորհրդակալը: 1917-1918 թթ. խմբագրում է «Հայկաշեն» թերթը և ակտիվ համագործակցում ՀԺԿ-ի հետ: Չանքեր է գործադրում գաղափարակից կուսակցությունների միավորման համար: Մեծ ներդրում է ունենում հայ որբերի

Պատմահայեցողական տեսանկյունից առանձնանում են հատկապես Պ. Տեփոյանի մի քանի հնչակյան գործիչների հուշեր «Ուխտումներ» շարքի ներածությունները: Դրանցում հեղինակ շարադրել է սեփական գնահատականները հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին փուլի մասին: Առանձնանում է հատկապես «*Ժամանակակից ազատագրական շարժումին առաջին սերունդի*» [11, էջ 5] ներկայացուցիչ, նախկին հնչակյան, ապա ռամկավար Միհրան Տամատյանի հուշերի նախաբանը [11]: Մինչև հուշերի բուն շարադրանքը, Տեփոյանը 17 էջ ծավալով ներկայացնում է հայ ազգային-ազատագրական պայքարի ընթացքի, կարևոր իրադարձությունների, նշանավոր նվիրյալների և ցավալի պարտության մասին իր պատկերացումներն ու եզրահանգումները:

Տեփոյանը գրում է, որ Ալիշանի հայրենասիրությամբ տոգորված դեռ ուսանողության տարիներից Տամատյանը «ազդուեցաւ ժամանակաշրջանի ազատագրական ցնցումներէն» [11, էջ 23]: Ըստ Տեփոյանի, դա այն շրջանն էր, երբ թուրք և քուրդ բռնակալ ուժերը միանում էին «ծրագրուած ցեղասպանութեան հակահայ շարժումին գործադրութիւնը» [11, էջեր 23-24]: Եվ որպեսզի լիակատար, ճիշտ և ըմբռնելի մատուցի Տամատյանի ու նրա սերնդակից հեղափոխականների գործունեությունը Տեփոյանը հակիրճ գույներով ներկայացնում է իր տեսակետներն ընդդեմ իշխանությունների ձևավորված Օսմանյան կայսրությունում բնակվող ժողովուրդների ազատագրական շարժումների - պատճառների մասին: Հեղինակը նշում է, որ 19-րդ դարի վերջին քառորդին Օսմանյան կայսրությունը դեռևս գտնվում էր վաղ միջնադարյան մակարդակում և ծուլ ու միայն սպառող իշխանությունները ոչ միայն խոչնդոտում էին ցանկացած առաջընթաց և զարգացում, այլև դաժան բռնաճնշումների էին ենթարկում առաջադեմ իր կազմում գտնվող զարգացած ժողովուրդներին: Դրանցից մեկը բազմաչարսար հայ ժողովուրդն էր, որի դեմ էլ ուղղվեց ատելության հիմնական սլաքը: Ինչու՞, որովհետև ըստ Տեփոյանի, առկա էին քաղաքական, տնտեսական և հոգևոր շարժառիթներ՝

1. Քաղաքական գլխավոր շարժառիթն այն էր, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Թուրքիան ոչ միայն կորցրեց իր եվրոպական տիրույթները, այլև մտավախություն ուներ, որ նույնը կարող է

փրկության գործում, այնուհետև անցնում է Եգիպտոս: Հիմնադիր անդամ է 1921 թ. ստեղծված ՌԱԿ-ի: 1947-48 թթ. «Արևի» խմբագիրն էր: Կարևոր պաշտոններ է զբաղեցրել ՌԱԿ կառույցներում: Հանդարտաբար էր, լրջախոհ, զգուշավոր և խիստ գաղտնապահ: Սկսել է ստեղծագործել 1901-ից: Մի շարք գեղարվեստական և պատմագիտական աշխատությունների հեղինակ է:

կրկնվել կայսրության արևելյան հատվածում, որտեղ հիմնական բնակչությունը հայերն էին [4, էջեր 34-45; 6, էջեր 429-456] և բնականաբար նրանք պետք է փորձեին առաջ ընթանալ ազատություն տանող ճանապարհների որոնումներով: Միաժամանակ Տեփոյանը չի բացառում ազատագրական շարժումների վրա արտաքին գործոնի ազդեցությունը և ցույց է տալիս, որ մեծ տերությունների միջամտությամբ էր պայմանավորված նաև Օսմանյան կայսրության վիճակի օրեցօր ավելի ու ավելի բարդացումը [10]: Այստեղից էլ Հայկական Հարցը նա չի համարում սոսկ որպես հայերի կողմից բարձրացված խնդրի և այն պայմանավորում է աշխարհի հզորների «իրերաբախ շահերու աղիտաւոր ներկայութեամբ»:

2. Տնտեսության ցածր մակարդակը, պատերազմները և վերնախավի ցուրտ ու շվայտ ապրելակերպը ստիպում էին և անճարակ իշխանությունները դատարկ գանձարանը լցնելու մտահոգությամբ անընդհատ ավելացնում էին հարկերը, ինչպես նաև շատ հաճախ դիմում ապօրինի հարկահավաքման ու ժողվրդին կեղեքելու վայրագ միջոցների [2; 5]:

3. Գաղափարական և հոգևոր-մշակութային ասպարեզում անհամեմատ ավելի զարգացած հայերն սկսել էին աստիճանաբար դուրս գալ դարավոր ընդարմացումից ընդվզել իշխանությունների և քուրդ հրոսակների վայրագությունների դեմ և հաճախակի նաև դիմել զենքի [6, էջեր 473-482, էջեր 513-515]:

Տավոք, այսօր էլ դեռևս խորությամբ և ամբողջովին ու լիարժեք չեն ընկալվում այդ պատճառներն ու դրանց արմատները, որոնք էլ առիթ են դառնում հայ ազգային-ազատագրական պայքարը որակել իրականությունից հեռու՝ երբեմն արհեստածին, երբեմն դրսից թելադրված-ներմուծված և այլ անհեթեթ ու սխալ: Իսկ այն, որ մեր հուզումնառատ օրերում այդ դրդապատճառների վերհանումն ու ներքին պատճառահետևանքային կապերի բացահայտումն ունի արդիական նշանակություն, կասկածից դուրս է: Եվ ի պատիվ Պ. Տեփոյանի, պետք է ընդգծենք, որ նա ժամանակին ճիշտ է հասկացել դա և նշել: Մ. Տամաթյանի մասին խոսելուց առաջ «*պէտք է կմսխքային համեմատութեամբ գոնէ տալ պատմաշրջանը բնորոշող ընդհանուր նկարագիրը պատկերացնող պատճառները, շարժումներն ու գործունեությունը, որոնց թելադրութեամբ ու անմիջական գործակցութեամբ ծնունդն առաւ եւ զարգացաւ հայ ազատագրութեան պատմական տռամը եւ հայ ժողովրդի չար բախտին հասաւ իր ահաւոր լուծումին: ...Այդ լուծումը հայ ժողովրդի գնահատումով միայն դժբախտ հանգրուան մըն էր եւ ոչ թէ վերջնական հաշուեյարդար մը*» [11, էջ 6]:

Միանգամայն գնահատելի է այն փաստը, որ հայ իրականության մեջ քչերն են ընդունել, թե

հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին՝ ֆիդայական շրջանն ավարտվեց պարտությամբ²: Չարգացնելով այդ թեզը Տեփոյանը նաև նա գտնում է, որ Հայկական հարցի լուծմանն ուղղված հերոսական մաքառումները հանգեցրին «դժբախտ հանգրուանի», ավելի գրգռեցին թուրքական թշնամանքը, որը կարճ ժամանակ անց հանգեցրեց 1909 թ. Ադանայի, ապա 1915-1923 թթ. Հայերի ցեղասպանությանը: Այսինքն, դրանք փաստորեն արևմտահայության համար վերջնական հաշվեհարդարի տարիները եղան:

Մեփական ժողովրդի ցավով տառապող Պ. Տեփոյանն այս երկում փորձում է ներկայացնել սույն ցավալի իրողությունների պատճառահետևանքային կապերը, որը հիմնականում ստացվում է: Նա ընթերցողին ապացուցում է, որ դա «խղճամիտ ուսանողին գործը չէ», այլ միայն հասուն, սթափ և փաստառատ վերլուծությունները կհանգեցնեն այդ պայքարի պարտությունների իրական և ճշմարիտ պատճառների բացահայտմանը. «...Կատուած դէպքերու մօտաւորապէս ճշգրիտ գնահատումը ընելու համար ոչ միայն պէտք է առարկայական մերձեցումքով արժէքաւորել անձնատրոյթիւններն ու անցքերը, այլև պատճառի և արդիւնքի հետազոտութիւնը կատարել այն բոլոր դէպքերուն, որոնք բուսանդակութիւն տուին խնդրոյ առարկա պատմաշրջանին» [11, էջ 7]: Իրականում էլ, կյանքը ցույց տվեց, որ այդ բախտորոշ իրադարձությունների մասին առանց հիմնավոր և ամբողջական հետազոտությունների տեսակետներ հայտնելն անիմաստ է: Իսկ մեծաքանակ տարիների հեռվից փաստերի անտեսումով եզրակացություններ կատարելը՝ մարգարեանալու զուր ձգտումներ: Փաստերի բարեխիղճ ուսումնասիրության արդյունքում մարտավարական կամ ռազմավարական սխալների վերհանումը միանգամայն ընդունելի երևույթ է, բայց դրան զուգընթաց անհրաժեշտ է որոնել նաև սխալների բուն պատճառները: Այս ամենի գիտակցումով է հայեցակարգային նշանակության տեսակներ մատուցում Պ. Տեփոյանը: Փորձենք առավել խորությամբ համոզվել դրանում:

Այդ ամենին զուգահեռ Պ. Տեփոյանն իր երկում կարևոր ու անհրաժեշտ է համարում նաև շարժման ընթացքում սխալների և բուն պատճառների փնտրտուքն ու բացահայտումը: Նախ նա անդրադառնում է արևմտահայության զարթոնքին և նշում է, «թէ արեւմտահայ զարթօնքը կը պատրաստուէր սկսած անցեալ դարու վերջին քառորդին, երբ ... թուրք քաղաքական մտածողութեան մեջ դէպի ազգայնամոլութեան բեկում մը կը կատարուէր» [11, էջ 7]: Ինչպես նաև այն, որ 19-րդ դարավերջին Օս-

² Առաջիններից մեկը Լեոն էր, ով այդ հիմնահարցը լուսաբանել է «Անցյալից» և «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» բարձրարժեք աշխատություններում:

մանյան կայսրությունում սկսված տնտեսական տեղաշարժերի արդյունքում ծնված թուրքական բուրժուազիան փորձում էր դուրս մղել կայսրության կազմում բնակվող այլազգի գործարարներին և իր տեղը գտնել արևի տակ: Ուստի այս հետնախորքի վրա բոլորովին էլ պատահական չէր, որ 19-րդ դարի վերջին քառորդին, արդիական էր դարձել սուլթան Ազիզին Ֆուատ փաշայի կողմից ուղղված քաղաքական կտակը, «որուն մէջ քաղաքագիտական լեզուով կը թելադրուէր Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ գեղերու միաձուլումը եւ անկարելի պարագային անոնց բնաջնջումը իրականացնել միատարր Թուրքիա մը ստեղծելու համար» [11, էջ 7]: Այսինքն, ըստ Պ. Տեփոյանի՝ **հայ ազգային-ազատագրական և թուրք ազգայնամուլական գաղափարների զարթոնքը միմյանց զուգահեռ, միաժամանակ ու համատեղ տեղի ունեցան**³:

Իսկ ազգայնականության և ազգայնամուլության⁴ տարբերությունն այն է, որ եթե ազգայնական գործիչը դարեր շարունակ իր իրավունքների բռնադատողների ու ոտնահարողների դեմ և հանուն իր պատմական ոտնահարված իրավունքները վերականգնելու համար է ելնում արդարացի պայքարի, ապա՝ ազգայնամուլն իր նպատակին հասնելու համար պատրաստ է ոչնչացնել ցանկացած խոչընդոտ, այդ թվում մի ամբողջ ժողովուրդ, որպեսզի ապահովի իր ազգի գերակայությունը: Այնպես որ, միանգամայն իրավացիորեն եզրակացնում է Տեփոյանը, հայ և թուրք ժողովուրդների այդ զարթոնք անխուսափելիորեն հանգեցնելու էր անգիջում հակընդդեմության, որն էլ, ցավոք, տեղի ունեցավ ցեղասպանության տեսքով. «*Հին թուրքը գաղթական ազգի մը սովորամոլութեամբ եւ նախնական մարդու ընթրնումով բռնակայութիւնը նկարագիր դարձուցած էր իր մէջ: Նոր թուրքը նոր տարր մը կ'աւելցնէր անոր վրայ: Եթէ հինին քով բռնակայութիւնը նկարագրի վերածուած պահանջ մըն էր, նորին ընթրնումով օտարացեղ տարրերը միաձուլել թրքութեան մէջ կամ բնաջնջել զանոնք գեղային կենսապայքարի անխուսափելի պարտադրութիւն մը կը նկատուէր: ...Նոր սերունդը պիտի առաջնորդէր նոր եւ ուժեղ կայսերական տարածութեամբ ազգ մը կերտելու աշխատանքին» [11, էջ 7]: Այսինքն, արդեն, ունենալով օտարից նվաճված և իրենք համարվող **հայրենիքի հիմնավորման** համար նրանք պատրաստ էին հիմնովին տեղաբնիկ ժողովուրդներ:*

³ Ընդգծումները հեղինակին են:

⁴ **Ազգայնականությունը** (նացիոնալիզմ) ազգի սեփական կենսաձևով իր հայրենիքում հարատևելու բնական ձգտումն է: **Ազգամուլությունը**՝ (ռասիզմ, շովինիզմ) ծայրահեղական ազգայնականություն է, «թերարժեք» ազգերի վրա բացառիկ իրավունքով օժտվածների կողմից գերիշխելու ձգտումը:

Նկատենք, որ Պ. Տեփոյանի այս հայեցակարգային եզրահանգումը կարևոր է նշված ժամանակաշրջանն ուսումնասիրող բոլոր հայ և օտար պատմաբանների համար:

Թուրքերի քաղաքական գերակայության հասնելու ձգտումը դյուրին գործ չէր, քանզի հանուն իր պատմական հայրենիքում իր իրավունքները վերականգնելու ոտքի էր ելել նաև հայ ժողովուրդը. «**Թուրքը՝ օտարացեղ ազգերը թուրքութեան մէջ միաձուլելու կամ զանոնք բնաջնջելու, մասնաւորապէս հայկական խոչընդոտը ընդմիջւո վերցնելու ծրագիր կը հետապնդէր: Իսկ հայը՝ ուրիշներու ազատագրական շարժումներու յաջողութենէն ներշնչուած եւ իրեն զրացուած գոնէ իր քաղաքացիական իրաւունքները ապահովելու ձգտումով կ'առաջնորդուէր: Այսպէս երկու ազգերու նոր սերունդները իւրահատուկ պահանջներէ մղուած ժամանակի ընթացքին նոր դէպքերու զարգացումով կը դառնային իրապէս թշնամի կողմեր: Այս հոգեբանական զարգացման մէջ, անշուշտ, արտաքին քաղաքական ազդեցութիւններ որոշ տարողութեամբ բացուած վիճիւր ընդդայնելու կը ծառայէին: Հոգեբանական այս երկու հակընդդէմ ձգտումներուն մէջ է որ ծրագրուած է հայկական ազատագրական շարժումի լուծումին ներքին ծայրերը» [11, էջ 10]: Այդ պայմաններում հայ ժողովուրդը սակայն անցավ դաժան փորձությունների միջով, որովհետև՝ ա) նրա ազգային-ազատագրական պայքարը միասնական ու համախմբված չեղավ, բ) կայսրության տարածքում ապրող մյուս ժողովուրդները չհամախմբվեցին ընդդեմ թուրքերի և վերջիններս դա վարպետորեն օգտագործում էին հօգուտ իրենց նպատակների, գ) իրենց շահերից ելնելով այդ պայքարը խրախուսող մեծ տերությունները Հայկական հարցի և այդ պայքարի նկատմամբ ավելի հաճախ դրսևորում էին հակասական ու ոչ հայանպաստ դիրքորոշումներ: Այսինքն, ակնհայտ էր այլևս, որ **հայի և թուրքի միջև անդունդն այն աստիճանի էր խորացել, որ հայ ազգային-ազատագրական պայքարն անխուսափելի էր դարձել, որին, ցավոք, չնայած իրենց լի ու առատ խոստումներին, մեծ տերություններն այնքան էլ բարնպաստ դիրքորոշում չդրսևորեցին:****

Վկայակոչելով այն հայտնի իրողություն, որ ֆրանսիական հեղափոխությունից ազդեցություն էին կրել շատ ժողովուրդներ, Պ. Տեփոյանը միաժամանակ շեշտում է, որ տարբեր էին դրա իրականություն դարձնելու հնարավորությունները: Ըստ նրա, դա Օսմանյան կայսրությունում նախ դրսևորվեց մարդկային տարրական իրավունքներն ապահովելու ձգտումներով: Սակայն Ման-Ստեֆանոյի և հատկապես Բեռլինի վեհաժողովից հետո հայ ժողովուրդը դուրս եկավ քաղաքական պայքարի և «*Թուրք իշխանաւորին եւ*

ժողովուրդին կազմակերպում հսկահայ քաղաքականությունը անգիր յանախ ալ գրաւոր հրիտակ: Այդ օրէն սկսած թուրք եւ հայ նախապէս գոյացած հակակրօնութիւնը վերածուեցաւ բացահայտ թշնամութեան: ... Այս պայքարին հետեւանքը եղաւ Թուրքիոյ սահմաններուն մէջ տկար կողմին բնաջնջումը: Ահա մեր պայքարին ընթացքն ու եղերական եզրակացութիւնը» [11, էջ 14]:

Պ. Տեփոյանը բավականին տարողունակ, ճշմարտացի ու համարձակ խոստովանություն է կատարում, որից կարևոր է հատկապես այն, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն անխուսափելի էր: Միաժամանակ հեղինակը ներկայացնելով այդ պայքարի վրա ազդող արտաքին ուժերին՝ լուսաբանում է պարտության պատճառները, որոնցից կարևորներն էին.

ա) Չնայած միջազգային որոշ ատյաններում ի նպաստ Հայկական Հարցի արձանագրվել են հայամետ որոշումներ, սակայն դրանց համար անհրաժեշտ իրավական փաստեր նրանց կողմից չեն վկայակոչվել:

բ) Դարեր շարունակ Օսմանյան բռնապետական ռեժիմը նվաճված և բռնի հպատակեցված ազգերին վերաբերվել է որպես իրեն անվերապահ ծառայող ու սնուցող ճորտի և ժամանակի ընթացքում դա նրա համար դարձել է կայուն հոգեբանական վարք:

գ) Այդ նույն հոգեբանական հոգեկերտվածքը սերմանվել է նաև կայսրությունում ապրող և գրեթե նույն ավարառուական և մակարոյծ հատկանիշներով ապրող կիսավայրենի քրդերի մեջ, որոնք ևս առաջնորդվելով թալանի ու կեղեքման միջոցով իրենց ապրուստը ձեռք բերող կենցաղավարությամբ, հայության նկատմամբ որդեգրել են նույն՝ ընդգծված նախանձի և նրանց ոչնչացնելու կործանարար դիրքորոշումը:

Ուշադրության են արժանի և պատմահայեցողական առումով կարևոր են նաև այսպես կոչված համաթուրանական ծրագրի ճախողման վերաբերյալ Պ. Տեփոյանի արտահայտած տեսակետները: «Պէտք է ընդունիլ, - գրում է նա, - թէ բացի ռուսական ահարկու ոյժէն, Հայկական Հարցը իրողաբար այն խոչընդոտն է, ինչպես ակնարկուեցաւ ժայռային սեպն է, որ միտած է այս հողային կենսական տարածութեան մէջ եւ կ'արգիլէ իրագործումը համաթուրանական երագին» [11, էջ 17]: Ակնհայտ է, որ այդ գործոնի նշանակությունը չափազանցված է, քանի որ հայ ժողովրդի ցրված նկարագիրը, անգիջում զինված պայքարին անպատրաստ լինելը, վճռական պատճառ ու պատվար չէին կարող լինել թուրանականության կամ պանթուրիզմի քաղաքականության դեմ: Պատմական փորձը ցույց տվեց նաև, որ թե ցարական Ռուսաստանը և թե եվրոպական տերությունները՝ սեփական շահերից ելնելով, չէին

կարող չխոչընդոտել նույն պանթուրիզմի իրականացմանը: Հետևաբար Հայկական Հարցն այդ զաղափարախոսության դեմ այն աստիճանի էր պատվար հանդիսանում, որքան հայության պայքարն ընդդեմ Թուրքիայի խրախուսվում էր մեծ տերությունների կողմից: Այսինքն, եզրակացությունը մեկն է՝ հայությունը միայնակ չէր կարող խոչընդոտել այդ ծրագրի իրականացմանը. «Թուրքիոյ հպատակ ազգերուն մէջ ամենադաժան մարտիրոսութեան բաժինը վիճակուեցաւ արտաքին շահակից պաշտպանութենէ գրկուած հայերուն որոնք իրենց պանական հայրենիքին մէջ թուրքերու կողմէ դարերու ընթացքին գործադրուած բնաջնջման տեսական քաղաքականութեանը միւսիման գեղերու ամբողջական թիւին հետ բաղտատելով իրենց նախկին միատարրութենէն վերածուեցան նախքան իրենց վիճակուած բնաջնջումը գորաւոր փորքամասնութեան: Եւ այս անժխտելի փաստն է գեղային դիմադրական արժանիքին» [11, էջ 18]: 1880-ական թթ. կեսերից մինչև 1918 թ. մայիսյան հերոսամարտերն ընդգրկող ժամանակահատվածի պատմությունը ցույց տվեց, որ իսկապես Հայկական Հարցը եղել է պանթուրիզմին խոչընդոտող վճռորոշ գործառույթ, սակայն ոչ միակը:

Ուղղակի պատմական ճշմարտությունը պահանջում է ընդգծել, որ Հայկական Հարցը միայն հայ ժողովրդի ազատագրման խնդիրը չէր, այլ որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, այն հաճախ մեծ տերությունների ձեռքին խաղաքարտ էր իրենց շահերն Օսմանյան կայսրությունում առաջ մղելու գործում, հետևաբար նաև ավելի շատ էր խոչընդոտում նրա պանթուրանական նպատակների իրականացմանը, քան հայերը: Պակաս կարևոր չէին նաև Պ. Տեփոյանի կողմից ընդգծվող այն իրողությունները, որ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համեմատությամբ հայությունն առավել զարգացած էր, իսկ 19-րդ դարի երկրորդ կեսից հայությունը մտավոր կարողությունների աննախադեպ անդարավոր ընդարմացումից զարթոնք ապրեց, որն էլ հայ ազգային-ազատագրական պայքարի նախապայմանը եղավ: Սակայն այդ պայքարը պարտվեց ինչպես ուժերի խիստ անհավասար լինելու, թուրքական իշխանությունների հայակործան քաղաքականության, այնպես էլ մեծ տերությունների տնտեսական ու քաղաքական շահերի բախման արդյունքում: Հետո էլ՝ հայ քաղաքական դեկավարները մշտապես և, նույնիսկ Բեռլինյան ճախողումից հետո էլ, այդ նույն տերությունների հետ կապեցին Հայ դատի լուծման հարցը, որն աղետալի եղավ մեր ժողովրդի համար: Իսկ ինչ վերաբերում է այդ ազատագրական պայքարը ղեկավարելուն կոչված կառույցներին, որոնցից մեկը Հնչակյան կուսակցությունն էր, ապա նրա պայքարն իր բնույթով ռոմանտիկ եղավ և շատ դեպքերում է ոչ միասնա-

կան: Միաժամանակ կուսակցության ծրագրի հեղինակները՝ գրեթե ծանոթ չլինելով Օսմանյան կայսրությունում տիրող դժնդակ պայմաններին, սխալ մարտավարություն և ռազմավարություն էին ընտրել, որի հետևանքով էլ սպասված արդյունքը չիրականացավ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության աննախադեպ քաղաքականացած կյանքը «Թավշյա» հեղափոխությունից հետո նոր թափ հավաքեց: Հասարակության մեջ ծավալված խմորումներն ուղղորդելու և ղեկավարելու համար ասպարեզ իջան մեծ թվով կազմակերպություններ: Աշխուժացան նաև հայ կյանքում քաղաքական ուրույն հետազիծ ունեցող ավանդական կուսակցությունները, որոնց արձանագրած հաջողությունների ու բաց թողած սխալների լուսաբանումը՝ այսօրյա գործընթացները հասկանալու և նախկին սխալները չկրկնելու առումով, ավելի քան, կարևոր ու արդիական է:

Այդ հիմնահարցերին անդրադարձել և բավականին իրատեսական գնահատականներ է հայտնել սփյուռքահայ մտավորական Պ. Տեփոյանը: Նա նշում է, որ կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների համեմատությամբ առավել զարգացած հայերը XIX դարի երկրորդ կեսին զարթոնք ապրեցին, որն էլ նախապայման դարձավ հայ ազգային-ազատագրական պայքարի համար: Մակայն այն ուժերի խիստ անհավասար լինելու, թուրքական իշխանությունների հայակործան քաղաքականության և մեծ տերությունների տնտեսական ու քաղաքական շահերի բախման արդյունքում պարտվեց: Հետո էլ՝ հայ քաղաքական ղեկավարները մշտապես այդ նույն տերությունների հետ կապեցին Հայ դատի լուծման հարցը, որն աղետալի եղավ մեր ժողովրդի համար: Միաժամանակ ազատագրական պայքարը ղեկավարելուն կոչված Հնչակյան կուսակցության ծրագրի հեղինակները՝ գրեթե ծանոթ չլինելով Օսմանյան կայսրությունում տիրող դժնդակ

պայմաններին, սխալ մարտավարություն և ռազմավարություն էին ընտրել: Նրանց մղած պայքարն իր բնույթով ռոմանտիկ եղավ և շատ դեպքերում էլ ոչ միասնական, որի հետևանքով էլ սպասված արդյունքը իրականացավ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1456, ց 1 և ց. 2,
2. Արևմտյան Հայաստանի տնտեսությունը (1856–1914 թթ.): - Արմավիր, 2003:
3. **Կիտուր Ա.** (խմբագիր ուսուցչապետ), Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962: Ա. հատոր: - Պէյրոս, 1962:
4. **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը XIX դարի 80–ական թվականներին: - Ե., 1980:
5. **Համբարյան Ա.**, Հայաստանի սոցիալ–տնտեսական հարաբերությունների համառոտ պատմությունը (XIX դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ): - Ե., 1983:
6. Հայոց պատմություն, Հ. III, գիրք առաջին: - Ե., 2010:
7. **Հովհաննիսյան Գ.**, Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.): - Ե., 2012:
8. **Մանուկեան Ա.**, Խմբակարի մը պատմութիւնը եւ Ժնեւի «Յեղափոխական ընկերութեան» կազմաւորման թուականը, Վերակազմյալ Հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170 ամյակներին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր: - Ե., 2022:
9. **Մանուկեան Ա.**, Հնչակեան Կուսակցութեան կազմակերպումը եւ Զսան Կախաղաններու մասին անդրադարձը եւրոպական մամուլի ու դիւանագիտական թղթակցութեանց մէջ: - Ե., 2020,
10. **Սահակյան Ռ.** Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.: - Ե., 1970:

*Տճան/Հանձնվել է՝ 17.04.2024
Рецензирована/Գրախոսվել է՝ 22.04.2024
Принята/Ընդունվել է՝ 28.04.2024*